

ԿՐՈՆ ԵԿԱՆ—ԲԱՐՈՅՔԻ ԿԱՆ

«Երանի խաղաղաբարաց».

(Պետրով բահանայից)

Մօտեցաւ մի անգամ Յիսուսին մի պատանի և ասաց.
«Վարդապետ, ասա եղբօրս, որ տայ ինձ հասանելիք բա-
ժինս հայրական ունեցուածքից»։ Յիսուս պատասխանեց.
— «Ո՞վ դրեց ինձ ձեզ գատաւոր»։

Եթէ եղբայրների վերայ դատաւոր դառնանք, միջա-
մտենք և դադարեցնենք եղած վէճը, մասնակի դա-
տը ժառանգութեան վերաբերմամբ, ամենայաջող դէպքում
մենք կկարողանանք ստիպել, որ մեծ եղբայրը փոքրին
վերադարձնի նորանից աւելորդ վերցրածը, իսկ փոքրը՝
իւր բաժինն ստանալով հանգարառուի։ Դա կլինէր հաշ-
տութիւն արտաքուստ, իսկ իներքուստ եղբայ-
ները նոյնը կմնային, ինչ որ առաջ էր,—մեծը, պատա-
հած դէպքում չէր քաշուիլ իւրացնելու ուրիշնը, իսկ
փոքրը չէր դադարիլ իրեն զրկողների վերայ բարկանա-
լուց, չէր կարող լինել անյիշաչար, ուրեմն և չէր հաշ-
տուիլ կորուստի հետ։ Այդպիսով չարիքի միայն ձղները
կտրատած կլինէինք, իսկ արմատը կմնար ողջ և էլի կտար
նոր ու նոր ընձիւղներ։ Պատահում է, որ հրդեհը երեսանց
ջրում, հանգցնում են, բայց ներսում, հող ու մոխրի տակ
պահուած է կրակը, որ կարող է գուրս սողալ—բոցավառուել
նոր ուժով։ Պատահում է, որ գնտակը խորը խրւում է մարմնի
մէջ և մնում այստեղ։ Ճարալը ծածկում է, վէրքը լաւա-
նում, երբեմն նոյն իսկ սպի կամ որ և է հետք էլ չի
մնում. բայց ներսում ցաւը կայ ու երբեմն-երբեմն զգալ
է տալիս իրեն։ Այդպէս էլ մարդկանց մէջ ամեն մի
անկարդութիւն, վէճ ու թշնամութիւն։ Դադարեցնել այն
արտաքուստ՝ դա քիչ է։ Արտաքուստ հաշտութիւնը նոյն
իսկ հաշտութիւն էլ չէ, այլ դինադադար, ծեփած ճեղք։

Յիսուս Քրիստոսին հարկաւոր էր եղբայրների ներքին հաշտութիւնն Նորան հարկաւոր էր ոչ այն, որ պատահած դէպք երում գործը վերջացնեն հաշտութեամբ. այլ այն, որ եղբայրների մէջ ամենուրեք և ընդ միշտ լիներ հաշտութիւն և այն ոչ արտաքուստ ըստ երեխյթին միայն ու մոխրի տակ թագուած կրակով, այլ ներքին հաշտութիւն, և այն լիակատար, այնպէս որ հին չարիքի արմատն անդամ չմնար. Հենց այդպիսի հաշտութիւն բերելու համար աշխարհ եկաւ Աստծու Որդին. և այդպիսի հաշտութիւն շատ է հարկաւոր մարդկանց. Մարդիկ իրար դէմ թշնամութիւն են անում, ազգ-ազգի դէմ, կրօն-կրօնի դէմ և վերջապէս հենց ինքներս մեր դէմ, հաշտ չենք մենք մեր խղճի հետ. Ամեն մարդ, ով այդ ընդհանուր թշնամութեան կրակի վերայ կթափէ կաթիլ անդամ սասր ջուր, ով մարդկանց իրարից բաժանող այդ վիճը լցնելու, հարթելու համար կթափէ այնտեղ մի բռւռն անդամ հոդ, նա ունեծ բարերարութիւն արած կլինի մարդկանց. Նա կդորձէ նոյնը, ինչ գործում էր ինքը Յիսուսն, Աստծու Որդին, — խաղաղութիւն, հաշտութիւն էր զցում աշխարհի մէջ. Դորա համար էլ ասուած է, — Երանի խաղաղաբարաց, նոքտ Աստծու որդիք կկոչուին:

Հին-Յունաստանում կար մի իմաստուն, որը տեղ ու դադար չունէր, այլ շրջում էր տնէտուն և յաճախ լինում այնտեղ, ուր լսում էր որ կայ որ և է անհամաձայնութիւն Մտնում էր, ուր կռուել էին եղբայրներ, խռովել բարեկամներ, թշնամացել մարդ ու կին. Լսում էր նոցա ջոկ-ջոկ, և սկսում մեղմօրէն համոզել, հաշտեցնել իւրաքանչիւրին առանձին:

— Պէտք է հաշտուել, ասում էր: — Եթէ գու կամ մի ուրիշը քեզ վիրաւրել է, չէ որ խկոյն սպեղանի զնում ես վէրքին և ծածկում, այլ ոչ թէ թողնում, որ վէրքն աւելի մեծանայ և ցաւոտ դառնայ: Պատառուել է թանկարին հագուստով՝ խկոյն կարկատում ևս-սաղացնում, այլ ոչ դէն ձգում: Այդպէս էլ պէտք է կարկատել, սաղացնել, բուժել այդ քանդուած, պատառուած, վիրաւորուած

բարեկամութիւնը, և ալէտք է շուշ անել այդ, որպէս զի վէրքը չհօտի, չփահրակալիս Ինչպէս որ ճանձերը նստելով քերուածքի վերայ՝ կեղտ են դնում, ազտոտում վէրքը, այսպէս էլ կդանումն մարդիկ, որոնք մերձաւորների, հարազաների վէճի ժամանակ մէկից միւսը լուրեր տանելով—բերելով՝ աւելի ևս խորացնում են, թունաւորում թարմ վէրքը: Մի ուշացիր, գնահաշուիր շուտով, առում էր սովորաբար իմաստունը զրկուածին, անպատուածին:

—Ե՞ս, ես գնամ հաշտուելու, զարմացած առում էր զրկուածը: Ինձ անպատիւ արին և ես լինեմ առաջինը հաշտուելու գնացող:

—Եյ՛, դու, առում էր իմաստունը մեզմութեամբ: Քեզ անպատիւ անողը գուցէ ամաչում է, նա գուցէ կարծում է թէ՝ եթէ ինքը զայ՝ մի գուցէ գու մերժես նորա պարզած ձեռքը: Իսկ քեզ համար հեշտ է, դու ներողութիւն չես խնդրելու, քեզ համար ամօթ չէ գնալ, եղբայրաբար ձեռք մեկնել և տաել.—«կեանքում շատ բան կպատահի: Տաքացնը, կուտեցինք, արի հաշտուինք, անցածը մուանանք»:

Զրկուածը համաձայնում է: Եւ ահա իմաստունն շտապում է զրկողի մօտ և հանգստացնում նորան ու համոզել սկսում:—«Երբ հրդեհ է, վտառում է, ժամանակը չէ որոնել թէ ով է հրդեհի պատճառը: Պէտք է շուտով հանգցնել այն, որպէս զի շուժեղանայ, չտարածուիր Տես, քո հին բարեկամութիւնդ այս ինչի հետ այրւում է, գնանք հանգցնելու, գնանք՝ հաշտուիր»:

—Ռւբախութեամբ կդայի, պատասխանում է զրկողը: Ռւզիդն ասած՝ խիղճս էլ տանջում է, տաքացայ, գուցէ աւելորդ խօսքեր ասացի: Բայց վախենում եմ, մի գուցէ երես դարձնի, ծաղրի ինձ:

—Եյդպէս չի լինիլ, ես երաշխաւոր եմ, հանգստացնում է իմաստունը: Նա ինքն է ուզում հաշտուել Տես, նա դէպի քեզ է գալիս:

Եւ հաշտուեցան թշնամիք: Շատ այլպիսի վէճեր էր հարթել, հաշտեցրել իմաստունը: Ամենքն էին ուրախ նորանով, ամեն տեղ ընդունում էին նորան որպէս Աստծու

հիւրու Եթէ մեր կեանքումն էլ լինէին այդպիսի մարդիկ, որ ուղղէին սխալանքները, հարթէին մեր թերութիւնները, կեանքը կանցնէր շատ թեթև, թէ չէ՝ թշնամութիւն սերմանել, զրկանքն ու անպատճութիւնը մէկից միւսին տանել, անէ տուն շրջեցնել, այդպիսի մարդիկ շատ կան, բայց չեն երեսում այնպիսիք, որոնք բերէին մարդկանց հաշտութիւն, խաղաղութիւն։ Ուրեմն հարիւրապատիկ երանելի են խաղաղաբարները, ճշմարիտ որ նոքա Աստծու որդին եր են՝ չարութեան և անհաշտութեան որդոց միջև։

Եւ ովքեր խաղաղութեան, հաշտութեան ողի են մըտցնում ոչ միայն առանձին անհատների միջև, այլ և աղգերի յարաբերութեանց մէջ, այդպիսիք առաւել ևս մեծ ու սուրբ գործ են կատարուամ։

Կիսի հանգուցեալ մեարոպոլիս Պղատոնը ոսկի սրտի և քրիստոնեայ հոգու տէր մարդ էր։ Եղաւ որ նա Պետերբուրգի Խահակեան տաճարում պաշտօն էր մատուցանում։ Այդ միջոցին տաճար մտաւ մի անդիմացի ճանապարհորդ և տեղեկանալով որ մեարոպոլիսն է պաշտօն մատուցողը, թոյլտուութիւն խնդրեց մօտիկ կանգնելու, որպէս զի լաւ տեսնէ, լսէ։ Վերջը նա խնդրեց մեարոպոլիսի օրհնութիւնը, որը և օրհնելով նորան՝ ասաց։

—Ես և դուք տարբեր երկրի և գաւանուութեան մարդիկ ենք, խօսում ենք տարբեր լեզուներով. սուկայն հաստատ հաւատացած եմ, որ այն բոլոր արգելքներն ու պատերը, որ մարդիկ կանգնեցրել են իրենց միջև՝ չեն աճել, հասել մինչև Աստուած, և նա երկնքի բարձրութիւնից միակերպ սիրով է նայում բոլոր մարդկանց, բոլոց աղքերի և երկիրների վերայ։ Յանուն այդ սիրոյ Աստծու օրհնում եմ ձեզ։

Ոսկի խօսքեր, Երկիրների տարբերութիւնը, կաշուի գոյնը, լեզուի և սովորութիւնների զանազանակերպութիւնը, այդ ամենը անջրպեաններ, արգելքներ են, որ մենք ինքներս ենք ստեղծել, կանգնեցրել մեր միջև, և որոնք չեն համում մինչև երկինք. սակայն երկրի վե-

բայ ամուր են կանգնած, և որպէս անանցանելի կերպով բաժանում են ազգերն իրարից: Բոլոր մարդիկ-Երկնաւոր Հօր որդիքը—պէտք է ազգեն որպէս եղբայրներ, բայց ապրում են որպէս թշնամիներ: Պէտք է հաշտութիւն մտցնել բոլոր ազգերի միջն, աղօթել աշխարհի խաղաղութեան համար, մանկութիւնից պէտք է ներշնչել մարդկանց թէ մենք ամենքս եղբայրներ ենք:

Խօն-Գրօգնին մատները ցոյց տալով՝ առում էր. «Սա՞ Թէոդոր որդիս է, սա՞ նորա կինը՝ հարս Իրինան, իսկ սա՞ նորա եղբայր Բօրիսը: Ո՞ր մատն էլ կտրես, կցաւի. որին էլ զրկես, կխղճաս»: Այդպէս մատների վերայ կարելի է ցոյց տալ զանազան ազգեր--ահա սա ոռուն է, սա՞ անզլիացին, այս միւսը՝ չինացին, չորրորդը՝ գերմանացին, սա՞ թուրքը, ահա հնդկացին, հրեան և այլն: Ո՞ր մատն էլ կտրես՝ կցաւի. ո՞ր երեխային էլ զրկես՝ մայրը հաւասարաչափ կվշտանայ. ո՞ր ժողովուրդն էլ որ նեղուի՝ ընդհանուր Հայրն է ցաւողը:

Փշել մարդկանց միջի անջրապետները, որ շինուած են մեր իսկ չարակամութեամբ, բոլոր երկիրների ժողովուրդներին բերել միացնել և կազմել մի եղբայրական գերդաստան՝ մեծ զործ է, սուրբ աշխատանք, որ սպասում է խաղաղաբարների: Ռւբեմն ներշնչեցէք ամենքին և ամենուրեք, որ բոլոր ազգերը աստուածային մի գերդաստան են կազմում և, որ վշտացնել օտարացեղ մէշկին, կնշանակէ վշտացնել եղբօրը, վշտացնել ընդհանուր Հօրը: Մանաւանդ ներշնչեցէք այդ՝ երեխաներին, որպէս զի նոր մարդիկ կեանք մացնեն նոր հասկացողութիւններ, զգացմունքներ: Սովորեցրէք նոցա սիրել հայրենիքը, սահկայն երբէք չխօսէք նոցա հետ դէպի թշնամին եղած ատելութեան մասին: Քրիստոս, Աստծու Որդին, խօսքով դադարեցնում էր փոթորկող ծովը. դուք էլ սիրոյ խօսքերով դադարեցրէք թշնամութիւնը մարդկանց մէջ: Հաշտութիւն բերեք մարդկանց, եղեք խաղաղաբարներ երկրի վերայ: «Երանի խաղաղաբարաց,—Աստծու որդիք կկոչուին»:

բարգ. Մարկոս Ֆանանոյ Տէր Մկրտչեան: